ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

№ Ե/39/702-25 «09» 10 2025թ.

«ԷԼՄԻՐԱ ԱՂԱՄՅԱՆ» ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Է. ԱՂԱՄՅԱՆԻՆ
/հասցե՝ Հայաստան, Նոյեմբերյան Տավուշ 1 փ/ S/52 Ոսկևան 4113;
էլ. հասցե՝ ssahak78@mail.ru/

Հարգելի՛ տիկին Աղամյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Էլմիրա Աղամյան» ԱՁ-ի միջև 2025 թվականի մայիսի 05-ին կնքված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-25/41-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում, որի շրջանակներում հետագայում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 09.09.2025թ. ծանուցվել է համաձայնագիր, սակայն սահմանված ժամկետում՝ մինչև 30.09.2025թ. ներառյալ, չի ներկայացվել մասնակցի կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 09-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլմիրա Աղամյան» ԱՁ-ն պայմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացրել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԳՀԱՊՁԲ-25/41 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 5,250.00 (հինգ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով ՝ 3,500.00 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ

տեղեկատվությունը,՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +374 98389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)